

# ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتك** جريدة يومية سياسية وأدبية - الليرة السورية، إشتادرووشيان

1500 L.Ո. 75ԳՎ ՏԱՐԻ, ԹԻԻ 49 (21099) ՀՈՐԵՔՇԱՐԹԻ, 8 ՄԱՅԻՍ 2002 10 ԷՁ

## ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՄԵԿՆԵՑԱԻ ՄԱԼԵԶԻԱ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկհերկորեայ պաշտոնական այցելության մը համար մեկնեցաւ Մալեզիա, ուր իր պաշտօնակիցին՝ Մահաթիր Մոհամէտի եւ բարձրաստիճան պաշտօնատարներու հետ պիտի քննարկէ երկու երկիրներու գործակցութեան եւ միջին արեւելեան հարցեր, ապա պիտի մեկնի Փաքիստան, ուր պիտի տեսակցի նախագահ Փերվէզ Մուշարրաֆի հետ:

Վարչապետ Հարիրի Քուալա Լամպուր հասաւ գիշերուան ժամը 10:00ին (Պէյրութի ժամով՝ երեկոյան ժամը 5:00ին), ուր դիմաւորուեցաւ արտաքին գործոց նախարար Մէուտ Համիտ էլ Պարի կողմէ: Հարիրի կ'ընկերակցին ելեւմուտքի նախարար Ֆուաատ Սինիորա, հանրօգուտ շինութեանց եւ փոխադրամիջոցներու նախարար Նաթիպ Միքաթի, Կեդրոնական Դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ եւ տնտեսական պատուիրակութիւն մը:

## ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՖԻՔ ՀԱՐԻՐԻ ԱՅՑԵԼԵՑ ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ



Երկուշաբթի, 6 Մայիս 2002ի երեկոյան, Անթիլիասի Մայրավանք այցելել Լիբանանի վարչապետ Ռաֆիք Հարիրի եւ հանդիպում ունեցաւ Արամ Ա. կաթողիկոսին հետ: Վարչապետին կ'ընկերակցէին իր երեսփոխանական պլանքին մաս կազմող երեսփոխաններ: Հանդիպումին ներկայ եղան նաեւ նախարար Սեպուհ Յովնանեան, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Անտրէ Թապուրեան, Յովակ Թիւրէյեան, Երուսիմ Փամպուքեան եւ Ոսկերեան Արզումանեան:

Շուրջ ժամ մը տեւած հանդիպման ընթացքին քննարկուեցան Լիբանանի ու Միջին Արեւելքի այժմու կացութեան կապուած կարգ մը հարցեր: Վեհափառ Մայրավանք իր խօսքին մէջ կարեւորութեամբ անդրադարձաւ Լիբանանեան ներքին միասնականութիւնը պահելու եւ տնտեսական տագնապը դիմագրաւելու անհրաժեշտութեան, եւ այս գծով Լիբանանի հայութեան ամբողջական պորակցութիւնը յայտնեց: Վարչապետը, իր կարգին, յայտնեց, որ իր կարելին կը կատարէ դիմագրաւելու համար ներկայ դժուար հանգրուանը, բոլոր Լիբանանցիներու միակամ ձրգերով, եւ այս առիթով իր բարձր գնահատանքը յայտնեց հայ համայնքին գործուն մասնակցութեան՝ Լիբանանի վերաշինութեան աշխատանքին:

## ՎԵՐՋԻՆ ԺԱՄ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ՄԸ ԱՆՁՆԱՍՊԱՆԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՑ. ԱՌՆՈՒԱԶՆ 15 ՉՈՂ

ԵՐՈՒՍԱԶՆԷՄ, 7 (ՌՈՑԹԸՐԸ).- Երէկ գեշեր Պէյրութի ժամով 23:45ին, պաղեստինցի մը անձնասպանական գործողութիւն կատարեց Իսրայէլի Ռիշլէն Լեցիոն քաղաքին մէկ ակումբին մէջ, պատճառելով անձուակն 15 զոհ եւ բազմաթիւ վիրաւորներ:

Ակումբին շէնքը փուլ եկած է, ըստ ակնաստեսներու, ինչ որ ենթադրել կու տայ, թէ անոր տակ տակաւին կը մնան դիակներ: Աւելի ուշ, Իսրայէլեան ոստիկանութեան մէկ պատասխանատուն հաստատեց լուրը, յայտնելով սակայն, թէ գործողութիւնը կատարուած է գիշերային զբօսավայրի մը մէջ: Իսկ հրէշնեք եւ հիւանդանոցային աղբիւրներ կը հաղորդեն, թէ կայ անձուակն քառասուն ծանր վիրաւոր, բոլորն ալ այրած:

Անձնասպանական այս գործողութիւնը տեղի կ'ունենար ճիշդ այն պահուն, երբ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն Սպիտակ Տան մէջ ժողով մը կը գումարէր Երազեալ նահանգներու նախագահ Ճորճ Պուշի հետ:

## ՅՐԱՆՍԱ

### ՇԻՐԱՔ ԶԱՆՁԱՆԻՉ ՅԱՂԹԱՆԱԿ ԱՊԱՆՈՎԵՑ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆԱԿԵՑ ՌԱՖԱՐԷՆԸ, ՈՐ ԿԱԶՄԵՑ ԻՐ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Յրանսայի նախագահ ժաք Շիրաք՝ Կիրակի օրուան ընտրութեանց ջախջախիչ մեծամասնութեամբ երկրորդ նստաշրջան մը ապահովելէ ետք, անմիջապէս լծուեցաւ նոր կառավարութեան մը կազմութեան աշխատանքին:

Շիրաք Երկուշաբթի օր առժամեայ վարչապետ նշանակած էր գրեթէ անծանօթ չափաւորական մը՝ Ժան-Փիեռ Ռաֆարէն: Ռաֆարէն երէկ կազմեց իր 21 հոգինոց կառավարութիւնը, որ կը բաղկանայ հետեւեալ գլխաւոր անդամներէն. Նիքոլա Սարքոզի՝ ներքին գործոց նախարար, Յրանսիս Մէր՝ ելեւմուտքի, տնտեսութեան եւ ճարտարարուեստի նախարար, Տոմինիք Տը Վիլփէն՝ արտաքին գործոց նախարար, Միշէլ Ալիօ-Մարի՝ պաշտպանութեան նախարար (առաւոր շինականներու անգամն է, որ կին մը կը ստանձնէ այս նախարարութիւնը):

Հայագի Փաթրիք Տեվէճեան (Եր. Փե. Էր.), որ նաեւ քաղաքապետ-երեսփոխանն է Անթոնի քաղաքին, նշանակուած է յատուկ յանձնարարութիւններով նախարար: Նոր կառավարութիւնը 6 շաբաթ ունի քաղաքականութեան հանդէպ ժողովուրդին հաւատարմութեան արտաբերութեան մը ի նպաստ կողմնորոշուած եւ կեդրոնի աջին համար յաղթանակ ապահովելու՝ Յունիսի կայանալիք խորհրդարանական ընտրութիւններուն: Ռաֆարէն, որ ծանօթ է համախոհութեան ապահովելու իր կարողութեամբ, վարչապետի իր պաշտօնը պիտի կատարէ մինչեւ Յունիս 9ի եւ Յունիս 16ի խորհրդարանական ընտրութիւններ, որոնցմէ Շիրաքի պահպանողական կողմը յաղթանակ կ'ուզուի պէտք է գայ՝ կանխարգիլելու համար ծախսի հետ անդամայրուժող այլ «համակցութիւն» մը:

Շիրաքի եւ ընկերակալական վարչապետ Լիոնէլ ժոսփէնի միջեւ 5 տարուան իշխանութեան բաժնեկցութիւնը կարելու տուեալ մը կը նկատուի ժողովուրդին ղեկավարութեան մէջ, որուն իրեն հետեւանք ծայրայեղ աջակողմեան ղեկավար ժան-Մարի Լը Փէն անց-



Շիրաք եւ Ռաֆարէն

եալ կիրակի օրուան ընտրութեանց երկրորդ հանգրուանին թեկնածուներէն մէկը մնացած էր: Ռաֆարէն (53 տարեկան), որ անդամ է ազատ շուկայի արեւելումով քաղաքականութեան մը ի նպաստ կողմնորոշուած Փոթրիկ Կզատական ժողովրդավարութիւն կուսակցութեան, մինչեւ Եր-

կուշաբթի օր անծանօթ էր նոյնիսկ իր հայրենակիցներուն համար: Յրանսական մամուլին մէջ անոր նշանակուածին գծով առաջին հակադարձութիւնը երէկ ընդհանրապէս դրական եղած է, թէքէ ղէպի ծախս թեքող «Լը Մոնտ» թերթը

Ծար.ը՝ էջ 10

**ԹՈՒՐԿԵՐԸ ԱՆՀԱՆԳԻՍՏ՝ ՓԱԹՐԻՔ ՏԵՎԷՃԵԱՆԻ ՅԱՏՈՒԿ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՐԱՐ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ**

Յրանսայի կառավարութեան մէջ հայագի Փաթրիք Տեվէճեանի նշանակումը անհաստատուեցաւ Երեւանի, որ կը յայտարարէ, թէ Տեվէճեանի ներկայութիւնը կը նշանակէ ահաբեկչութեան գաղտնաբերութեան կառավարութեան մէջ... Թրքական «Արշամ» թերթը կը գրէ, որ Լը Փէնը գերապահեցելու համար հայերու քուէներուն կարիքը ունեցող ժաք Շիրաք իր խոստացածին պէս, «ԱՍԱԱ»-ի դատապարտական Փաթրիք Տեվէճեանը նշանակած է նախարար: Թերթը կը նշէ, որ Յրանսայի Ազգային Ժողովի անդամ Տեվէճեան ծանօթ է իր հակաթուրք կեցուածքներով եւ Յրանսայի կողմէ Հայկական Յեղասպանութեան անսանձան գործընթացի գլխաւոր նախաձեռնողներէն էր: «ԱՐՄԵՆՓՐԵՍ»

Ծար.ը՝ էջ 10

## ՄԻՆՉ ԸԱՐՈՆ ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ՄԷՁ ԿԸ ՏԵՍԱԿՅԵՐ ՊՈՒՇԻ ՀԵՏ

### ԲԵԹՂԵՀԷՄԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇԱՐՄԱՆ ԳԾՈՎ ՆՈՐ ՎԷՃԵՐ՝ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՊԱՀՈՒՆ

Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին ապաստանած պաղեստինցի գինեակներուն տաղանայր լուծելու ճիգերը ղեկավարութեան բաժնեկցութեան մէջ, որուն իրեն հետեւանք ծայրայեղ աջակողմեան ղեկավար ժան-Մարի Լը Փէն անց-

հաղորդեց, որ համաձայնութիւնը գոյացնելէ կարճ ժամանակ մը առաջ, ծայր տուաւ պաղեստինեան ապահովութեան ուժերու անդամ երկուներուն զինքերու գծով վէճ մը: Ան աւելցրեց, որ պաղեստինցիները երաշխաւորագիր կը պահանջեն, ապահով ըլլալու համար, որ երբ ամէն ինչ կ'աւարտի, զեն-

քերը պիտի վերադարձուին: Իսրայէլացի պաշտօնատարներ յայտնած էին, որ համաձայնութիւնը գոյացած է եւ թէ շուտով Ս. Ծննդեան եկեղեցւոյ պաշարումը պիտի վերցուի՝ հարթելու համար ճամբայ վարչապետ Արիէլ Շարոնի, որ կը պատ-

Ծար.ը՝ էջ 10

## ՆԱԽԱԳԱՅ ՔՈՇԱՐԵԱՆ՝ ՀԱՐԱԲԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՁ



Քոշարեան կը ժամանէ Մոնթեվիդեո:

Մայիս 6ի երեկոյան, Հայաստանի նախագահ Ռաֆիք Քոշարեան հասաւ Պրագայի եւ Սան Փաուլոյի Հայ Առաքելական եկեղեցւոյ մէջ հանդիպում ունեցաւ պրագայի համայնքին հետ: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հայաստանի արտաքին քաղաքականութեան, Հայաստանի տնտեսական իրավիճակին, Լեւոնյանի Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացին եւ Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման աշխատանքներուն, եւ բազմաթիւ նիւթերու շուրջ պատասխանեց պրագայի հայերու հարցումներուն: Ան նշեց, թէ Սփիւռքը պիտի մնայ Հայաստանի արտաքին քաղաքականութեան ուղղորդութեան կեդրոնը:

Նախագահ Քոշարեանի գլխաւորած պատուիրակութիւնը 3 Մայիսին հասած էր Արժանթին: Նոյն օրը, նախագահ Քոշարեան հանդիպում ունեցաւ արժանթինցի իր պաշտօնակիցին՝ էտուարտո Տուհալտէի հետ: Ստորագրուեցաւ միացեալ յայտարարագիր եւ միջկառավարական գործակցութեան 4 համաձայնագիրներ: Աւելի ուշ, նախագահ Քոշարեան հանդիպումներ ունեցաւ Արժանթինի կառավարութեան եւ խորհրդարանին մէջ:

Կառավարութեան կեդրոնատեղիին մէջ, ողջունելով նախագահ Քոշարեանը, Արժանթինի վարչապետ Անիպալո իպարա յայտարարեց. «Մեզի կ'այցելէ ոչ միայն պետութեան ղեկավար մը, այլեւ՝ ներկայացուցիչը հազարամեայ ազգի մը, որ եղած է մարդկային քաղաքակրթութեան օրրան»: Ան նախագահին յանձնեց մայրաքաղաք Պուէնոս Այրէսի խորհրդանշական բանալին եւ պատուաւոր հիւրի հռչակագիր, նշելով, որ անիկա կը տրուի նաեւ իրբեւ գնահատանք Արժանթինի մէջ հայկական համայնքի ներդրումին: Արժանագրութիւն մը կատարելով պատուոյ հիւրերու տոմարին մէջ, նախագահ Քոշարեան յոյս յայտնեց, որ բարեկամական կապեր հաստատուին նաեւ երկու երկիրներու մայրաքաղաքներուն միջեւ:

Արժանթինի խորհրդարանին մէջ նախագահ Քոշարեան հանդիպումներ ունեցաւ Մերակոյտի ժամանակաւոր նախագահ Խուան Քարլոս Մակեցալի, Քոնկրէսի երկու պալատներու արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովներու նախագահներու եւ ծերակուսականներու հետ: Խորհրդարանա-

Ծար.ը՝ էջ 10

**ԵՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է**

**ԱՊՐԻԼ 24Ի ՆՈՒԻՐՈՒԱԾ «ԱԶԳԱԿ»Ի ԲԱՑԱՌԻԿԸ**

**ԱԶԳԱԿ 24 ԱՊՐԻԼ 2002**

87 հազար

144 էՁ, ՍԱԿ՝ 5000 L.Ո.

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՅ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՄԻՆ ԺԵՄԱՅԵԼԸ

Երկուշաբթի, 6 Մայիս 2002ին, վեհարանի իր գրասենյակին մէջ Արամ Ա. կաթողիկոս ընդունեց այցելուները Լիբանանի նախագահ Ամին ժեմալէի:

Սոյն հանդիպումը առիթ մը եղաւ խորհրդակցելու Լիբանանի ներքին քաղաքականութեան ու միջհամայնքային յարաբերութեան կապուած հարցերու մասին: Այս շրջագիծէն ներս նախկին նախագահը կարեւորութեամբ ընդգծեց կաթողիկոսարանին դերը:

## ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ



Հայաստանի և Արցախի վարգացման ծրագիրներ առաջարկող հայրենի պատուիրակուիներ, որուն մաս կը կապեն Հ. Յ. Դ. Քիւրդի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, Հայաստանի և Արցախի վարգացման գործիչ, հրապարակագիր Զօրի Բալայեան, Շաքար օր շարունակեցին իրենց այցելութիւնները լիբանանահայ գաղութէն ներս: Անոնք այցելեցին հայ կաթողիկէ պատրիարքարան, ուր տեսակցութիւն մը ունեցան Ներսէս - Պետրոս ԺԹ. պատրիարքին և պատրիարքական ընդհանուր փոխանորդ Վարդան Եպս. Ազարեանի հետ:



Հայրենի պատուիրակուիները նաեւ ծաղկեպսակ վետեղեց Պուրճ Համուտի մէջ լիբանանահայ նահատակներու նորակառոյց յուշարանին:

## ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԻԱԿ ՄԻՋՈՅՑ ՄԱԿԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆՆ Է

Կ'ԸՍԵ ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ

Հանրապետութեան նախագահ Կօր. Էմիլ Լահուտ երէկ վերահաստատեց, որ Միջին Արեւելքի և աշխարհի որեւէ անկաշուն շրջանի մէջ արդար, ամբողջական և վերջնական խաղաղութիւն հաստատելու միակ միջոցը ՄԱԿի որոշումներուն գործարարութիւնն է, իսկ ամէն քայլ, նախաձեռնութիւն կամ ժողով, որ կ'անուծուի միջազգային օրինականութեան որոշումները, դատապարտուած է, ձախողութեան, և գործնական պատճառ պիտի դառնայ ՄԱԿի անդամայնութեան:

Նախագահ Լահուտ ըսաւ: «Լիբանանի բարեկամ Ուաշինգթոնի յայտնեցինք, որ իրեն նպատակ ունի կորսնցնել արաբական աշխարհէն ներս իր բազմաթիւ բարեկամութիւնները, պահպանելու համար Իսրայէլի շահերը և կոշտացուած իրաւունքները անսահման լինելու վտանգներէն: Նաեւ կ'զուշացուցինք, որ արդարութեան և իրաւունքին վրայ հիմնուած խաղաղութեան արաբական նախաձեռնութիւնը վիճեցնելու ճիգը և վայրագ արարքները պիտի վատթարացնեն յուսալքումը, առեւտրիւնը և ծայրայեղականութիւնը, որոնք ցատկով մեծ դեր ունեցած են Սեպտեմբեր 11ի դէպքերուն մէջ, ըսաւ:»

Նախագահ Լահուտ նաեւ կ'զուշացուց, որ ՄԱԿի որոշումներուն կամայական գործարարութիւնը և Արիւի Շարունի կողմէ կանոնը, իսկ աշխարհի խաղաղութեան պետութիւնները պիտի ունենան ծիւղակային անդրադարձներ, որոնք պատասխանատու են Իսրայէլի և անոր նեցուկ կանգնողները:

Պէրթի արաբական վեհաժողովէն ետք Իսրայէլի կողմէ Պաղեստինի մէջ շրջապատուած յայնաժիր յարձակումն ու անոր արդիւնքները, անոր նկատմամբ կեցածքները և շարժումները ցոյց կու տան, որ շրջանէն ներս փոփոխութիւններ կրնան պատահիլ և անհրաժեշտ է միացեալ արաբական կեցածքով դիմագրաւել պանոնք, իսկ աշխարհի խաղաղութեան պետութիւնները պիտի ունենան ծիւղակային անդրադարձներ, որոնք պատասխանատու են Իսրայէլի և անոր նեցուկ կանգնողները:

Նախագահ Լահուտ նաեւ կ'զուշացուց, որ ՄԱԿի որոշումներուն կամայական գործարարութիւնը և Արիւի Շարունի կողմէ կանոնը, իսկ աշխարհի խաղաղութեան պետութիւնները պիտի ունենան ծիւղակային անդրադարձներ, որոնք պատասխանատու են Իսրայէլի և անոր նեցուկ կանգնողները:

Նախագահ Լահուտ նաեւ կ'զուշացուց, որ ՄԱԿի որոշումներուն կամայական գործարարութիւնը և Արիւի Շարունի կողմէ կանոնը, իսկ աշխարհի խաղաղութեան պետութիւնները պիտի ունենան ծիւղակային անդրադարձներ, որոնք պատասխանատու են Իսրայէլի և անոր նեցուկ կանգնողները:

## ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ Ի ՊԱՏՐԻ ՏԻԿԻՆ ԱՆԻ ԳԱԼՈՒՍԻ

Երկուշաբթի, 6 Մայիս, երեկոյեան ժամը 6:00ին, էջրեֆիէի Հ.Կ.Մ.ի «Արարատեան» սրահին մէջ, պատրիարք Տէր Ներսէս - Պետրոս ԺԹ.ի հովանաւորութեամբ տեղի ունեցաւ ընկերային վաստակաւոր ծառայող տիկին Անի Գալուստի մեծարանքի հանդիսութիւնը: Հանդիսութեան ներկայ էին կաթողիկէ համայնքի պատասխանատուներ, հայ քաղաքական կուսակցութեանց ներկայացուցիչներ, ՔԱՐԻԹԱՍԻ, ինչպէս նաեւ բարեսիրական այլ միութիւններու ներկայացուցիչներ և մեծաթիւ ներկայութիւն:



Պատրիարքը կը մեծարէ տիկին Անի Գալուստը:

Բացման խօսքը հայերէնով և ֆրանսերէնով կատարեց Միքայէլ վարդապետ Մուրատեան: Ապա վկայութիւն կատարելու համար բեմ բարձրացաւ ՔԱՐԻԹԱՍԻ ժեհթառուի մասնաճեղհի քարտուղարուհի տիկին Մարիթան Տէրտէրեան, որ խօսեցաւ տիկին Անի Գալուստի բարեսիրական աշխատանքներուն մասին:

Վկայութեանն էտք ելոյթ ունեցան Նարինէ Յարուսթիւնեան (Թաւրուսթակ) և Իգայէլ Գալայեան (Գալայեակ) Կոմիտաս - Ասլամազեանի «Հով առեք» և Այվազեանի «Պարբարոյ» երաժշտական կոորներով:

Ապա վկայութեան համար բեմ բարձրացաւ Գէորգ վարդապետ Ասատուրեան: Գեղարուեստական բաժինով կատարուեցան «Արաչեա Վասն Մեր» և «Յովհաննէս Թումանեանի «Իմ երգը» երգերը՝ մեկնաբանութեամբ Ռիթա Մարգարեանի և ընկերակցութեամբ Թամար Գասպեանի (Գալայեակ):

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ Մ. ԵՒ Հ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԸՆՄԱՐԱՆԻ ՍԱՆՔԵՐՈՒ ՖՈՆՏԻՆ

●Յակոբ Սարաֆեանի մահուան քառասունընամ ամիսը, ձեմարանի տնօրէնութիւն, ուսուցչական կազմ և պաշտօնութիւն 150 \$

Վերջին վկայութիւնը կատարեց տիկին Գալուստի ՔԱՐԻԹԱՍԻ գործակից տիկին Զէյնա Մատի, որ ըսաւ, թէ տիկին Ա. Գալուստ առանց խորականութեան տարած է առողջապահական, ընկերային և կրթական գործունէութիւն:

## ԵՊԻՍԿՈՊՈՍԿԱՆ ԶԵՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Յառաջիկայ Կիրակի, 12 Մայիս 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենայ եպիսկոպոսական ձեռնադրութիւն և օծում:

Ձեռնադրութիւնն ու օծումը պիտի կատարէ և իր հայրապետական պատգամը պիտի տայ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Եպիսկոպոսական ձեռնադրութիւն և օծում պիտի ստանայ Սեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միջեկեղեցական բաժանմունքի վարիչ՝

ԳԵՐԱՊԱՏԻ Տ. ՆԱՐԵԿ Ծ. ՎՐԴ. ԱԼԵՆՄԵՂԵԱՆ

Սուրբ պատարագ՝ ժամը 10:00  
Ձեռնադրութիւն և օծում՝ ժամը 10:30  
Հայրապետական պատգամ՝ ժամը 11:00

Ձեռնադրութեան առաջին բաժինը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 11 Մայիսի երեկոյեան ժամը 5:00ին:

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Շաբաթ և Կիրակի օրերու հանդիսաւոր արարողութեան:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

## ՀԱՐԱՄԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆ ՀՐԶՊԱԼԼԱ ԿԸ ՀԱԿԱԴԱՐՁԷ ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ԿՐԱԿՈՑՆԵՐՈՒ

Երէկ յետմիջօրէին, հարաւային Լիբանանի Ռմէյշ ասիմանամերձ գիւղին մօտ բախում տեղի ունեցած է Հրպալլայի և իսրայէլեան ուժերուն միջեւ: Իսրայէլացիք կրակ բացած են լիբանանեան գիւղերու վրայ, իսկ Հրպալլա հակադարձ է: Հրոյ ճարակ դարձած է իսրայէլեան պիտոտական կառք մը, սակայն զոհ չէ արձանագրուած:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՄՊՆԱՆՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՒԹ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սիրելի հայրենակիցներ, Լիբանանում Հայաստանի դեսպանութիւնը տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետութեան կրթութեան և գիտութեան նախարարութիւնը նախաձեռնել է հիմք դնել Սոր՝ միջազգային օլիմպիադայի հայոց լեզուից և հայ գրականութեանը: Հայոց լեզուն մեր ժողովրդի ձակապարտ մեջ միշտ էլ առանձնատուր ղեր է խաղացել, քանի որ մեր գոյութեան պայքարը նաեւ լեզուի պահպանման պայքար է եղել: Մեր լեզուն մեր պատմութիւնն է, մեր գոյութեան հիմքը, մեր մշակութիւնի մեծագոյն հարստութիւնը: Օլիմպիադայի անցկացումը, կարծում ենք, կը նպաստի հայոց լեզուի պահպանմանը, մէկ անգամ էս կը կարեւորի նրա դերը: Այն կարող է նպաստել նաեւ տաղանդաւոր, շնորհալի և ստեղծագործական կարողութիւններով օժտուած երիտասարդների յայտնաբերմանը, Հայաստան - Սփիւռք յարաբերութիւնների զարգացմանը, Հայաստանի և Սփիւռքի երիտասարդների՝ հայոց լեզուի և հայ գրականութեան իմացութեան խորացմանը: Օլիմպիադայի կ'անցկացուի Հայաստանի Հանրապետութեան կրթութեան և գիտութեան, արտաքին գործերի նախարարութիւնների, Գործերի Միութեան, Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի լեզուի և գրականութեան ինստիտուտի, լեզուի պետական տեսչութեան և Երեւանի Պետական համալսարանի կողմից՝ Ապրիլ - Հոկտեմբեր ամիսներին:

Օլիմպիադայի կ'անցկացուի հայոց և հայ գրականութեանը՝ երկու փուլով (արեւմտահայերէն և արեւելահայերէն՝ ըստ մասնակցի ցանկութեան): Առաջին փուլն անց է կացուելու տեղերում (երկու մակարդակով՝ տարրական և բարձրագոյն), որի յաղթողները կը մասնակցեն Հոկտեմբերի 7ից 14ը Հայաստանում կայանալիք ամփոփիչ 2րդ փուլին:

Օլիմպիադայի կարող են մասնակցել 15ից 19 տարեկան պատանիները՝ աշխարհի բոլոր երկրներից, որոնք ունեն համապատասխան պատրաստութիւն: Յաղթողների համար սահմանուել են յատուկ մրցանակներ: Հայաստանում Օլիմպիադայի 2րդ փուլի մասնակցների կեցութեան և շրջապատութեան բոլոր ծախսերը կը իրագործուի կազմակերպիչներին:

Օլիմպիադայի առաջին փուլի հարցաթերթիկների նմուշները դուր կարող էք ծանօթանալ Հայաստանի կրթութեան և գիտութեան նախարարութեան ինտերնետային էջում՝ [www.edu.am](http://www.edu.am) հասցեով, ինչպէս նաեւ կարող էք ստանալ Հայաստանի դեսպանութիւնից:

Լիբանանում Հայաստանի դեսպանութիւնը տեղեկացնում է, որ հայոց լեզուից և հայ գրականութեանը անաջին համահայկական օլիմպիադայի լիբանանեան առաջին տարրական փուլն անցկացուելու է Լիբանանի բոլոր հայկական երկրորդական վարժարաններում ս/թ. Մայիսի 10ին, ժամը 12:00ին: Երկրորդական վարժարանների բոլոր սաները մասնակցում են իրենց վարժարաններում, իսկ միւս ցանկացողները միջեւ առաջին փուլի օրը կարող են արձանագրուել վարժարաններից որեւէ մէկում և այդտեղ մասնակցել առաջին փուլին:

Սաղթում ենք յաջողութիւններ:

ԼԻԲԱՆԱՆԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊՆԱՆՈՒԹԻՒՆ

THE CULTURAL HOUR  
@  
HAIGAZIAN UNIVERSITY  
Cordially invites you to a lecture  
On  
CHALLENGES FOR HIGHER EDUCATION  
IN THE INFORMATION AGE  
By  
DR. WADI HADDAD  
Former Director and Corporate Deputy  
Secretary of the World Bank Group  
Thursday, May 9, 2002 - 6:00 p. m.  
Haigazian University Media Center-Kantari

ՄԱՀԱԶԴ

Տիկին Արսէլի Գաթուրեան և զուտորը՝ Ռաֆայէլ Տէր և տիկին Գրիգոր Գաթուրեան և զուտորը՝ Թալին

Տէր և տիկին Ժորժ Եւսէֆ և զուտորը  
Տէր և տիկին Յակոբ Գաթուրեան և զուտորը  
Տէր և տիկին Թորոս Գաթուրեան և զուտորը  
Մենզիլեան ընտանիք  
Մահաբէճեան ընտանիք  
և համայն ազգականներ կը գովեն իրենց ամուսնուն, հօր, զակին, եղբոր և հարազատին՝

ԸՄՖՖԻ ԳԱԹՈՒՐՃԵԱՆԻ (Ծնեալ 1960ին)

անակնկալ մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 7 Մայիս 2002ին, իր բնակարանին մէջ:

Յուրաքանչեւ որոշութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 8 Մայիս, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Նոր Մարաշի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

●Ներկայ ընդունիլ իրբե մահագոյ:  
●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, «Արմենիա» փողոց, Տորա, «Թճնուկեան» շէնք, Յրդ յարկ, Հինգշաբթի 9, Ուրբաթ 10 և Շաբաթ 11 Մայիսին:

Հ.Յ.Դ. Լ.Ե.Մ. ԴՐՕՇԱԿ ՄԱՍՆԱՃԻՂ

Լ.Ղ.Հ. ՇՈՒՇԻ

ՇՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐԱՆ

ԿԻՔԵՆ ԶԱԲԱՐԵԱՆԻ ՆԱՀԱՍԱԿՈՒԹԵԱՆ

10 ԱՄՄԵԱԿ

ԲԱՆԱԿՈՍ ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Տեղի կ'ունենայ այսօր՝ Չորեքշաբթի, 8 Մայիս 2002, երկուշաբթի ժամը 8:00ին, «Յակոբ Տէր Սելընեան» քառասունամեայ մեջ:

# ՄԱԿԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԸԱՍԱԺՈՂՈՎԸ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԻՐ ՏԵՍԱԿԱՆԸ

Նիւ Եորքի ՄԱԿի կեդրոնատեղիին մէջ 170 երկիրներ եւ մեծ թիւով ոչ կառավարական կազմակերպութիւններ ներկայացնող պատուիրակութիւններ, որոնց մաս պիտի կազմեն աւելի քան եօթնամասուն երկիրներու ղեկավարներ, 8 - 9 - 10 Մայիսին պիտի համաժամուրկին, մանուկներու նուիրուած համաշխարհային վեհաժողովի մը՝ ՄԱԿի Ընդհանուր Համագումարի Մանուկներու Յատուկ Համաժողովին պարունակին մէջ կեդրոնանալու մանուկներու վիճակին համաշխարհային տարողութեամբ բարգաւաճման եւ ապագայի խաղաղ ու ապահով աշխարհի մը տեսլականին իրականացման մէջ այսօրուան երեխաներուն խաղալիք հիմնական դերին առնչուող քննարկումներու:

Յատուկ Համաժողովը, որ նախապէս տեղի պիտի ունենար 2001ի Մեպտեմբերին եւ որ յետագայեցաւ 11 Սեպտեմբերի յարձակումներէն ետք, 1990ի Մանուկներու Համաշխարհային Վեհաժողովին բխած որոշումներու գործադրութեան տանամանք արժեւորում մը ըլլալու կողքին նաեւ կը միտի գործնականացրել այն առաջադրանքները, թէ ինչպէս երեխաներու դաստիարակութեան, առողջապահութեան եւ ապահովութեան համար կատարուած ներդրումները երկար տեւողութեան վրայ ոչ միայն պիտի նպաստեն, այլ նաեւ բանալի դերակատարութիւն պիտի ունենան համաշխարհային կայունութեան եւ խաղաղութեան ապահովելու առնչութեամբ:

Երբ օրերու վրայ երկարող ճանապարհներու եւ կորստեղանքներու կողքին պիտի կազմակերպուին նաեւ օժանդակ ձեռնարկներ, որոնցմէ առաջինը՝ Մանուկներու Համաշխարհային Կոնֆերանսը (բացառապէս երեխաներու մասնակցութեամբ) արդէն իսկ տեղի ունեցաւ 5 - 7 Մայիսին: Այս բոլորին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն նաեւ իրանական եւ հայկական պատուիրակութիւններ: Լիբանանեան պատուիրակութիւնը կը գլխավորէ Առաջին Տիկին Անտրէ Լաուսը՝ ընկերակցութեամբ երեսփոխան Նայա Մուաուատի: Հայաստանեան պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմեն ՀՕՄակները, պիտի գլխավորէ տիկին Օսկանեան: Միւս կողմէ, ՀՕՄը, իրեն տարիներէ ի վեր ՄԱԿի շարժական գործունէութեան մասնակցող ոչ կառավարական կազմակերպութիւն, կը ներկայանայ իր պատուիրակութեամբ: Նշենք, որ հայկական պատուիրակութիւններուն մաս կը կազմեն նաեւ հայաստանցի երեխաներ, որոնք խօսք պիտի առնեն այլ երեխաներու կողքին՝ իրեն կենդանի վկայութիւն գանձանք երկիրներու մէջ ոչ կառավարական կազմակերպութիւններու աշխատանքներուն:

Յատուկ Համաժողովին ընթացքին ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան պիտի ներկայացնէ «Մեճք երեխաներ» խորագրեայ տեղեկանքները մանուկներու բարգաւաճման համար կատարուած աշխատանքներուն մասին, որոնց ակնարկելով, ան 2001ի Յունիսին ըսած էր. «Աշխարհը չէ յաջողած ամբողջովին իրագործել Մանուկներու Համաշխարհային Վեհաժողովին նպատակները, ոչ թէ անոնց անիրականանալու թեան, այլ անբաւարար մասնակցութեան պատճառով»:

Ինչպէս բարգաւաճող եւ ոչ բարգաւաճ բոլոր երկիրներուն, նոյնպէս Լիբանանի մէջ երեխաները կը դիմագրաւեն ծանրակշիռ հարցեր, զորս զէջի որոշ չափով լուծելու համար ԵՆԻՆՍԻՏԵՒԻ, Այ. Էլ. Օ.ի (Միջազգային Աշխատանքի կազմակերպութիւն), Միջազգային կարմիր խաչի նման կազմակերպութիւններ՝ համագործակցաբար լիբանանեան իշխանութիւններուն եւ մանաւանդ տեղական բարեսիրական կազմակերպութիւններուն, տարիներէ ի վեր տարբեր մարզերու մէջ օժանդակութեամբ աշխատանք կը տանին: Այս աշխատանքին արդիւնքը զգալի կը դառնայ յամբարձն, նկատի ունենալով, որ տակաւին լիբանանցի մանուկին տարրական իրաւունքները, ինչպէս՝ պարտադիր եւ անվճար ուսում, առողջապահական հոգատարութիւն, առողջ եւ ապահով միջավայր, չեն ապահովուիր պետութեան կողմէ, որուն անկարողութեան իրենց բարեսիրական կազմակերպութիւններուն աշխատանքները կը նման անբաւարար եւ լաւագոյն պարագային, կը նպաստեն որոշ շրջանի կամ համայնքի երեխաներուն բարգաւաճման:

Մինչ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին երեխաներու բարօրութեամբ մտահոգ կազմակերպութիւններու մօտ առաջնահերթութիւն դարձած էր հոգալ անոնց սնունդը, այսօր, պատերազմի աւարտէն աւելի քան տասնամեակ մը ետք, տնտեսական տագնապին առկայութեամբ, փոխուած են նաեւ առաջադրանքները: Մեծ աճ արձանագրած է, եւ կը շարունակէ արձանագրել, դպրոցէն հեռացող եւ օրապահիկ շահելու մտահոգութեամբ փողոց նետուող երեխա-պատանիներուն թիւը, որոնց ի տես, բարեսիրական կազմակերպութիւններուն ներկայի թիրախը կը հանդիսանայ թերուս երեխաներու յանձնարումը մտալ եւ մանաւանդ կարելի բոլոր միջոցներով



Աշխատող պատանի մը:

արգիւել անոնց դպրոցէն հեռացումը: Այս մարզէն ներս ներկայացնենք օրինակ մը: Անցնող տարուան ընթացքին Այ. Էլ. Օ.ի հովանաւորութեամբ լիբանանեան բարեսիրական կազմակերպութիւններ, որոնց շարքին Լիբանանահայ Օգնութեան իսալը, սկսած են գործադրել նոր ծրագիր մը՝ աստիճանաբար սահմանափակելու, եւ ապագային՝ ամբողջութեամբ վերացնելու համար ԵՆԻՆՍԻՏԵՒԻ, Այ. Էլ. Օ.ի (Միջազգային Աշխատանքի կազմակերպութիւն), Միջազգային կարմիր խաչի նման կազմակերպութիւններ՝ համագործակցաբար լիբանանեան իշխանութիւններուն եւ մանաւանդ տեղական բարեսիրական կազմակերպութիւններուն, տարիներէ ի վեր տարբեր մարզերու մէջ օժանդակութեամբ աշխատանք կը տանին: Այս աշխատանքին արդիւնքը զգալի կը դառնայ յամբարձն, նկատի ունենալով, որ տակաւին լիբանանցի մանուկին տարրական իրաւունքները, ինչպէս՝ պարտադիր եւ անվճար ուսում, առողջապահական հոգատարութիւն, առողջ եւ ապահով միջավայր, չեն ապահովուիր պետութեան կողմէ, որուն անկարողութեան իրենց բարեսիրական կազմակերպութիւններուն աշխատանքները կը նման անբաւարար եւ լաւագոյն պարագային, կը նպաստեն որոշ շրջանի կամ համայնքի երեխաներուն բարգաւաճման:

Մինչ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին երեխաներու բարօրութեամբ մտահոգ կազմակերպութիւններու մօտ առաջնահերթութիւն դարձած էր հոգալ անոնց սնունդը, այսօր, պատերազմի աւարտէն աւելի քան տասնամեակ մը ետք, տնտեսական տագնապին առկայութեամբ, փոխուած են նաեւ առաջադրանքները: Մեծ աճ արձանագրած է, եւ կը շարունակէ արձանագրել, դպրոցէն հեռացող եւ օրապահիկ շահելու մտահոգութեամբ փողոց նետուող երեխա-պատանիներուն թիւը, որոնց ի տես, բարեսիրական կազմակերպութիւններուն ներկայի թիրախը կը հանդիսանայ թերուս երեխաներու յանձնարումը մտալ եւ մանաւանդ կարելի բոլոր միջոցներով

Միւս կողմէ, ԼՕՍԻ տագնապին առկայութեամբ, փոխուած են նաեւ առաջադրանքները: Մեծ աճ արձանագրած է, եւ կը շարունակէ արձանագրել, դպրոցէն հեռացող եւ օրապահիկ շահելու մտահոգութեամբ փողոց նետուող երեխա-պատանիներուն թիւը, որոնց ի տես, բարեսիրական կազմակերպութիւններուն ներկայի թիրախը կը հանդիսանայ թերուս երեխաներու յանձնարումը մտալ եւ մանաւանդ կարելի բոլոր միջոցներով

մազան հարցեր կը սպասեն լուծման: Արդեօք ՄԱԿի Մանուկներու Յատուկ Համաժողովը պիտի կարենա՞յ մեծ քայլ մը առնել բարձր աշխարհի մը հիմքը կազմող մանուկներու բարգաւաճումը ապահովելու իր տեսլականին մէջ: Վստահարար այս երեք օրերուն ընթացքին շատ առաջարկներ պիտի ներկայացուին, որոշումներ պիտի տրուին, բայց թէ անոնք ի՞նչ տարողութեամբ պիտի բարելաւեն մեր երեխաներուն առօրեան, կը մնայ հարցական: «Այս ժողովները կը յաջողին այնքանով, որքանով որ մասնակցող պատուիրակութիւնները կը յաջողին իրենց երկիրներուն մէջ արձագանգ հանդիսանալ որդեգրուած որոշումներուն եւ հետապնդել անոնց գործադրութիւնը», ըսաւ Մ. իտըշեան:

**ԼԱՐԱ**  
ԽԸԶԱՐՃԵԱՆ  
ԸՆԴ  
ՐԱՅՑԻ  
ԳԱՍԳԱՐԵԱՍ  
**Խօսեցեալք**  
Շաբաթ,  
4 Մայիս 2002  
Պէյրուօ

**ԲԱՆՏԱՒՈՐՈՒՄԾ**  
Տէր եւ տիկին  
Անդրանիկ եւ  
Երան  
Քէչէպաշեան  
բախտաբար եւ  
առջինէլ մանչ  
պատկով մը՝  
**ԳԵՂԱՍ**  
1 Մայիս 2002  
Քունթիսի  
Յունաստան

**ԿՈՒՉՈՒԻ**  
•Երկաթագործ մը կարիք ունի երիտասարդ (18Ե 30) եւ փորձառու գործաւորի մը: Ըն. 01-487518:  
**Lantern**  
•Կը ստանձնէ ուրախ առիթներու video  
Գկարահանումներ  
Ըն. 01-266866  
Եւ 03-695399

# ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԲԵՄ ԲԱՐՉՐԱՅՈՒՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԱՐՈՒԵՍԸ

Արուեստը եւ մանաւանդ հայկական պարարուեստը քաջալերելու նպատակով Համապայիւնի Լիբանանի Պարարուեստի Միաւորը գեղեցիկ անհղութիւնը ունի կազմակերպելու միջոցառումներ, որոնց վերջինը տեղի ունեցաւ Շաբաթ, 4 Մայիսի երեկոյեան ժամը 4:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատրարահին մէջ:



Յետ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութեան, Պարարուեստի Միաւորին անունով բացման խօսքարտասանուեցաւ, որուն մէջ վեր առնուեցաւ հայկական պարարուեստը սերունդէ-սերունդ փոխանցելու անհրաժեշտութիւնը եւ հակիրճ կերպով շեշտուեցաւ մանուկին հոգեմտաւոր պարգաւման վրայ պարին ունեցած դրական ազդեցութիւնը: Ապա, շուրջ մէկ ժամ տեւած յայտագիրով յաջորդաբար բեմ ելան իրանահայ տասներկու վարժարաններու աշակերտներ, որոնք ներկայացուցին հայկական աւանդական պարարուեստը, շունչ ունեցող մէկական պարեր: Այսպէս, բեմ բարձրացան Ալգային Ար-

գարեան վարժարանի («Մարտական պար»), Հայ Կաթողիկէ Գ. Հարպոյեան վարժարանի («Արեւածաղի»), Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարանի («Պատկեր դայամով քաշած»), Համապայիւնի Մ. Է. Արայանեան ձեռնարանի («Լոռի-Լոռի»), թրատի Հայ Աւետ. վարժարանի («Երեւան»), Ալգային Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճի («Քոչարի»), Ալգային Գ. Չաթայաշեան վարժարանի («Կապոյտ թռչուն»), Հայ Աւետ. Փ. Է. Թորոսեան վարժարանի («Երեւանեան պար»), Հայ Կաթողիկէ Մերուպ պարեր: Այսպէս, բեմ բարձրացան Ալգային Ար-

տասնից Մանկանց վարժարանի («Էրպրու մի շորոր»), Ս. Հոփսիմեանց վարժարանի («Յոյս») եւ Հ. Բ. Մ. ի Կարմիրեան վարժարանի («Մարդարայատ») աշակերտները, որոնք առաւել կամ նուազ կատարելութեամբ, բայց հայկական պար պարելու բացառաբար վարակիչ ուրախութեամբ, ներկայացան իրենց ծնողներուն եւ ուսուցիչներուն:

Արդարեւ, քաջալերելի ձեռնարկ մը, որուն հետեւողականութիւնը անպայման օրէն իր դրական անդրադարձը պիտի ունենայ նոր սերունդը - հայկական մշակոյթ կապին ամրացման մէջ:

**La lumière en privilège**  
**La lumière en privilège**  
REF. 6115 REF. 1115 REF. 1124 REF. 6124 REF. 1115 REF. 5215  
**G. AYANIAN & SONS**  
Dora. (01) 255222/3/4/5/6 - Gemmayz. (01) 447000-445396- (03) 62728/9, Fax: (01) 265187-58257

**Գրատուն**  
**ՈՍԿԵՂԱՐ**  
• Ունինք ձեր փնտրած գիրքերը եւ բառարանները  
• Ոսկեղարի ԵՐԱԶԱՀԱՆԸ, Երգարան եւ Մանկական գիրքեր  
• Զարգացումի միահատոր Համայնագիտարաններ՝  
Պոլրձ Համուտ, Ս. Փրկիչ եկեղեցոյ կից Հեռ. 01/264750  
P.O.Box 11-8877 Beirut Lebanon

**ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՈԼԱՐՈՎ ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ**  
**10,25%\* տարեկան տոկոսով**  
\*Նուազագոյն մասնակցութիւն՝ 3000\$  
\*3 տարուան մասնակցութեան տեսողութեամբ  
\*Տոկոսը կը վճարուի իւրաքանչիւր 6 ամիսը անգամ մը:  
**Ըն. - 01/745660 01/248997**  
بنك التمويل ش.م.ل  
Finance Bank s.a.l.







ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՀԱՅԵՐԸ ՏԻՐԱԿԱՆ ՈՒԺ՝ ԵՐՈՒՍԱԿԵՄԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԻՆ ՄԷՁ

Երուսաղէմի խաչակիր թագաւորութեան ժամանակաշրջանին Պաղեստինի հայ գաղութը շարունակեց բազմանալ, զօրանալ եւ իր գործօն մասնակցութիւնը բերել երկրի զարգացման, բարգաւաճման ու պաշտպանութեան: Լայն ծաւալ ստացան նաեւ ուխտագնացութիւնները: Սալահաթին Ալուպիի կողմէ Երուսաղէմի գրաւումէն ետք այլ հայերու իրաւունքները պահպանուեցան:

ԵՐՈՒՍԱԿԵՄԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Երուսաղէմի թագաւորութիւնը, հիմնուած՝ 1099ին, խաչակիրներուն կողմէ, կոտորուեալ տը Պուրիտինի եւ Պոտուէն Ա. ու Պոտուէն Բ. թագաւորներուն օրով արդէն բաւական զօրացած ու ընդարձակուած էր: Անիկա կ'ընդգրկէր Պաղեստինը եւ ներկայ Տարաւային Լիբանանն ու հարաւարեւմտեան Յորդանանը: Անկէ աւտակաւ կախման մէջ էին խաչակիրներու կողմէ հիմնուած միւս իշխանութիւնները՝ Եդեսիոյ եւ Թրիփոլի կոմսութիւնները եւ Անտիոքի իշխանութիւնը:

Թագաւորութիւնը աւտակաւ չորս մեծ տիրոջմբնուեալ էր. Եւֆրատի եւ Աւքալոնի կոմսութիւն, Քրաք տը Մոնրէպալի տիրոջ, Գալիլիոյ իշխանութիւն եւ Սալտայի տիրոջ: Երուսաղէմ եւ շրջակայքը, Սուր եւ Աքրա արքունի կալուածներ էին: Կարգ մը հողեր բաժնուած էին Հիւրընկալներու, Տաճարական ու Տեւտոնեան միաբանութիւններուն: Եւ ասպետներու՝ զինուորական ծառայութեան պարտաւորութեամբ: Հոգեւորականութիւնը, վանքերն ու միաբանութիւնները ընդարձակ հողեր ունէին:

Իշխող դասակարգը Երուսաղէմի եկած յատկանքներն էին (ընդհանրապէս Ֆրանկ, Ֆլաման եւ իտալացի աւտակաւներ, ազնուականներ, ասպետներ եւ հոգեւորականներ), որոնք սակայն փոքրամասնութիւն կը կազմէին: Բնակչութեան մեծամասնութիւնը արաբ, յուն եւ ասորի գիւղացիներ էին, որոնք եկուոր աւտակաւներուն ճորտերը դարձած էին: Կային նաեւ ստրուկներ: Հայերը, մօտաւորապէս հազար ընտանիք, իրենց վանքերով, պատրիարքական աթոռով, զինուորական ու քաղաքական դերակատարութեամբ, խնամակաւ կապերով, ինչպէս նաեւ կրիպտոյ հետ Երուսաղէմի թագաւորութեան յարաբերութիւններուն ու խաչակիր միւս իշխանութիւններուն հետ կապերու իմաստով ազդեցիկ ուժ կը ներկայացնէին:

Երուսաղէմի թագաւորութիւնը առանձին օրէնսդրական համակարգ ունէր. օրէնքներու ժողովածուն «Երուսաղէմի Ասիքներ» կը կոչէին: Անիկա գրուած էր երկրի պաշտօնական լեզուով՝ Ֆրանսերէնով, եւ ուր կարգաւորուած էին թագաւորին, պալատականներուն ու ազնուականներուն իրաւունքներն ու պարտաւորութիւնները, դատական համակարգի, տուրքերու եւ զինուորական ծառայութեան վերաբերեալ հարցեր: Հոգեւորականութիւնը զերծ էր տուրքերէ ու զինուորական ծառայութենէ: Բնակչութիւնը միշտ պատրաստ պէտք է ըլլար դիմակալելու համար թշնամիներու յարձակումները:

Թագաւորութեան անտեսութիւնը կախեալ էր շրջակայ իսլամ իշխանութիւններուն հետ առեւտուրէն, դրամատնային աշխուժութենէն եւ ուխտագնացներու վրայ դրուած տուրքերէն: Թէն ինքնաբաւ, բայց բերքը սկար եղած տարիներուն հացահատիկը Սուրիայէն կը ներածուէր:

Այս ժամանակ, մինչ հայերու դէպի Երուսաղէմի թագաւորութեան տարբեր քաղաքներ հոսքը կը շարունակուէր (մասնաւոր դր կրիպտոյ խաչակիր վիճակի մատնուած էր բիւզանդացիներու եւ սելճուկներու դէմ կռիւններուն պատճառով), սակայն, միւս կողմէ, յարաբերութիւնները սրեցան կրիպտոյ եւ Երուսաղէմի թագաւորութեան միջեւ, որովհետեւ Երուսաղէմի եւ Անտիոքի խաչակիր պետութիւնները կրիպտոյին հողեր գրաւած էին: Ի վերջոյ Լեւոն Ա. իշխան դաշնակցեցաւ իր քրոջ զաւակին՝ Եդեսիոյ կոմս ճոսիին եւ Հալէպի Չանկիներուն հետ եւ 1135ին պատերազմի ձեռնարկեց Անտիոքի դքսութեան եւ Երուսաղէմի թագաւորութեան դէմ: Մինչեւ 1136 շարունակուած կռիւններուն Լեւոն Ա. ազատագրեց կրիպտոյ հարաւարեւելեան հայաբնակ շրջանները:

Յուլը տ'Անժու 1137ին միացաւ Բիւզանդիոնի (որ նոյն օրերուն կրիպտոյ ներխուժած էր), այս անգամ դէմ դնելու համար Մուսուլի Չանկիներու պետ իմաստիտինի, որ ժիւիտ հռչակելով Ֆրանկներուն դէմ հասած էր մինչեւ Դամասկոս, սպառնալով Երուսաղէմի: Յուլը 1140ին օգնեց Դամասկոսի իսլամներուն, Չանկիներու դէմ պատերազմին: Ան մահացաւ 1143 Նոյեմբերին, Աքրայի մէջ:

ՊՈՏՈՒՆ Գ.Ի ԺԱՄԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆԻՆ

Յուլը տ'Անժուի մահէն ետք անոր յաջորդեց զաւակը՝ Պոտուէն Գ.: Մնած՝ 1131ին՝ Սուրը Ալյաբը, ան թէն 1143ին թագաւոր հռչակուեցաւ, բայց մայրը՝ Մելիզան ձեռք առաւ իշխանութիւնը:

Իսլամներ 1144ին գրաւեցին Եդեսիոյ կոմսութիւնը, որուն իբրեւ հակադարձութիւն՝ 1147ին ծայր առաւ խաչակրական երկրորդ արշաւանքը. նոյն օրերուն Պոտուէն Գ. փորձեց Դամասկոսի դէմ քայլել, բայց չյաջողեցաւ, եւ արդէն խաչակրական այդ արշաւանքն այլ ձախողութեամբ աւարտեցաւ:

Ամրոյժ իշխանութիւնը իր ձեռքերուն մէջ կեդրոնացնելու նպատակով Պոտուէն Գ. 1151ին քաղաքացիական պատերազմի ձեռնարկեց իրեն մրցակից ազնուականներուն դէմ եւ 1152ին իշխանութիւնը առաւ մօրմէն՝ Մելիզանին: Ան նաեւ ազդու միջամտութիւններ կատարեց Թրիփոլի եւ Անտիոքի խաչակիր պետութիւններու ներքին գործերուն: 1153 Օգոստոսին ան Աքրայի գրաւեց Եդիպտոսի Տաթիմականներէն: 1154ին, Դամասկոսի վրայ յարձակումը, զայն գրաւելու Հալէպի աթաբ

օրերուն Պոտուէն Գ. թագաւոր եւ Անտիոքի Բոնսթանս դքսուհին անձնապէս միջամտեցին կայսեր մօտ, որպէսզի հրաժարի կրիպտոյն նուաճելու իր քաղաքականութենէն: Այս միջամտութեան շնորհիւ Թորոս Բ. իշխան եւ կայսրը հաշտուեցան. կայսրը հայոց իշխանը պատուեց «Առաջին Սեբաստոս» բարձրագոյն տիտղոսով:

Մանուէլ Ա. կայսր, Պոտուէն Գ. թագաւոր, Թորոս Բ. իշխան եւ Անտիոքի դքսուհին 1159ին դաշնակցութիւն մը կազմեցին, միացուցին իրենց ուժերը եւ որոշեցին յարձակիլ Հալէպի աթաբէի նուաճումին վրայ, բայց չյաջողեցան իրականացնել իրենց ծրագիրը:

Պոտուէն Գ., որ հաւատացեալ, գործունեայ եւ բարձր զարգացումի տէր էր, զիտակից էր Արեւելքի մէջ թրիստոնէական ուժի միութեան անհրաժեշտութեան եւ հայութեան ներկայացուցած առանձնապատկ զիրքի կարեւորութեան. այդ պատճառով ալ ան միշտ աշխատեցաւ լաւ յարաբերութիւն պահել հայուն հետ: Ան մահացաւ 10 Փետրուար 1162ին, Պէլլուսթի մէջ:

ԱՄՈՐԻ Ա.Ի ՕՐՈՎ՝ ՀԱՅԵՐ ԵՐՈՒՍԱԿԵՄԻ ԿԵՐԱՐԵՆԿԵՅՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

Պոտուէն Գ. թագաւոր անգաւակ էր. հետեւաբար 1163ին անոր յաջորդեց Եւֆրատի եւ Աւքալոնի կոմս Ամորի Ա.:

Եդիպտոս 1160ին համաձայնութիւն գոյացուցած էր Երուսաղէմի թագաւորութեան հետ եւ ընդունած էր տուրք վճարել անոր, բայց բնաւ ալ չէր վճարած: Հետեւաբար Ամորի Ա. որոշեց հակակռիւի տակ առնել Եդիպտոսը եւ վերջ տալ իսլամական միութեան. գահ բարձրանալէն ետք, նոյն տարին՝ 1163ին ան ներխուժեց Եդիպտոս: Նոյն ժամանակ Սուրիոյ տիրակալ Նուրէտտին յարձակեցաւ Երուսաղէմի թագաւորութեան վրայ: Այս պայմաններուն տակ Ամորի համաձայնեցաւ Բիւզանդիոնի Նուրէլ Ա. կոմսենոս կայսեր եւ Յրանսայի Լուի Է. թագաւորին հետ, որուն համար Եդիպտոս պիտի բաժնուէր Ամորիի եւ Բիւզանդիոնի միջեւ: Բայց Եդիպտոսի վրայ արշաւանքը ձախողեցաւ եւ Ամորիի բանակները քաշուեցան իրենց սահմանները:

Երուսաղէմի թագաւորութեան ռազմական ուժը զօրացնելու նպատակով Ամորի թագաւոր բաւակցութեան մէջ մտաւ կրիպտոյ Թորոս Բ. իշխանին հետ, երեսուն հազար հայեր կրիպտային Պաղեստին վերաբնակեցնելու համար, որ սակայն չգործադրուեցաւ:

Ամորի Ա. մահացաւ 11 Յուլիս 1174ին:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ՝ ՏԱՐԲԵՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԷՁ

Երուսաղէմի թագաւորութեան քաղաքական այս ժամանակաշրջանին հայ համայնքները իրենց բարգաւաճման զագաթնակէտին հասած էին: Հոն հաստատուած էին մեծ թիւով

հայ զինուորականներ, որոնցմէ շատեր կրիպտային եւ Սուրիայէն միացած էին խաչակիրներուն: Կրիպտային եւ Հայաստանէն կարեւոր թիւով հոգեւորականներ Սուրը վայրերու հայոց վանքերու միաբանութիւններուն միացած էին: Աշխարհիկ համայնքները բազմաթիւ, տարբեր քաղաքներու մէջ հայկական թաղամասեր կազմաւորուած էին: Այսպէս, Երուսաղէմի, Աքրայի եւ այլ քաղաքներու մէջ հայերը, Ֆրանկներուն, իտալացիներուն կամ անգլիացիներուն նման իրենց առանձին թաղերը, զինուորական կարգերը, իրաւակարգը, դատարանը եւ պաշտօնները ունէին: Շատ մը շրջաններու մէջ իւրաքանչիւր թաղ պարսպով եւ երկաթեայ դուռներով պաշտպանուած էր, ուր իրենց առանձնապատկութիւններով իւրաքանչիւր համայնք կը պահէր իր ուրոյն գոյակիճակը:

ԺԲ. դարու այս ժամանակաշրջանին նշեց Ներսէս Լամբրոնացիի մայրը, որ իր զաւակը Ներսէս Շնորհալիի մօտ կուսական քահանայ ձեռնադրելէն ետք մեկնեցաւ Երուսաղէմ, «յերկրպագութիւն Սուրը Տեղեաց»:

ԵՐՈՒՍԱԿԵՄԻ ԳՐԱՒՈՒՄԸ ՍԱԼԱՀԷՏՏԻՆԻ ԿՈՂՄԵ. ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ ՀԱՅՈՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ

Ամորի Ա. թագաւորի մահէն ետք անոր յաջորդեց զաւակը՝ Պոտուէն Գ. ծնած՝ 1161ին. ան 13 տարեկան էր երբ գահ բարձրացաւ, եւ Թրիփոլիի կոմս Ռեմոն Գ. անոր խնամակալ ընտրուեցաւ:

Մագուսով քրտո Սալահաթին Ալուպի, որ էմիր Նուրէտտինի զաւակն էր, Չանկիի զինուորական հրամանատարներէն էր, 1169ին Սուրիոյ զինուորական հրամանատար եւ Եդիպտոսի վեզիր հռչակուած էր, իսկ 1171ին չի Ծաթիմականներու խալիֆայութիւնը ընդունեց: Եդիպտոսն յառաջապալով՝ Սալահաթին 1177 Նոյեմբերին յարձակեցաւ Աքրայի վրայ. քաղաքը ամրութիւններուն յենած՝ Պոտուէն Գ. ետ մղեց ներխուժողները Սոն կիսարի մօտ, բայց կոտի ժամանակ բորոտութեան վարակեցաւ եւ կուրցաւ: 1180ին հաշտութիւն գոյացաւ, բայց 1183 Յուլիսին Սալահաթինը գրաւեց Հալէպը, յայտնով օղակ մէջ առնելով Երուսաղէմի թագաւորութիւնը:

Բորոտած ու կուրցած Պոտուէն Գ., գահին ժառանգութիւնը ապահովելու համար մեծ քրոջ՝ Սիպիլի զաւակը՝ Պոտուէն Ե.՝ 1183 Նոյեմբերին թագաւոր օժեց, Թրիփոլիի կոմս Ռեմոնը եւ ժոսլէն Գ. տը Գուրթենայը անոր խնամակալ նշանակելով: Պոտուէն Գ. մահացաւ 16 Մարտ 1185ին, 24 տարեկանին:

Պոտուէն Ե. (ծնած՝ 1177ին, Երուսաղէմ) մէկուկէս տարի իշխեց եւ մահացաւ 1186ին: Անոր յաջորդեց Սիպիլի երկրորդ ամուսինը՝ Կի (Գուրիտոն) տը Լուսինեան, որ Սուրը Շիրիմի եկեղեցիին մէջ թագաւորութիւնը ստակայն թագաւորութեան ճգնաժամը մօտեցած էր եւ Սալահաթինի զօրքերու օղակին մէջ առնուած: Օրհնատան կացութեան առջեւ թագաւորին շուրջ համայնքացուցան ազնուականներ, ասպետներ եւ քրիստոնեայ համայնքները, փրկելու համար երկիրը:

Սալահաթինի 50 հազարոց բանակը սահմաններուն վրայ կեդրոնացած էր, երբ Գուրիտոն թագաւոր եւ իր բանակը շարժման դրաւ. երկու բանակները իրարու հանդիպեցան 2 Յուլիս 1187ին, Թիպերիտի մօտ. պատերազմը տեւեց երեք օր եւ վերջացաւ քրիստոնեաներու պարտութեամբ. երեսուն հազար քրիստոնեաներ զոհուեցան, իսկ Գուրիտոն թագաւոր եւ անոր մերձակները գերի ինկան: Նոյն տարուան Հոկտեմբեր 2ին, Սիպիլի թագուհին անձնատուութեանն էր Սալահաթինի ձեռք առաւ Երուսաղէմը:

Տիրելով Սուրը վայրերուն, Սալահաթին թէն վերջ դրաւ լատիններու վայելած առանձնաշնորհումներուն, սակայն, իբրեւ Արեւելքի բնիկ ժողովուրդ, պահեց եւ հաստատեց հայոց բոլոր իրաւունքները. ան ոչ միայն վերահաստատեց Աքրայի մէջ Երուսաղէմի պատրիարքին (1180 - 1191) ներկայացուցած վաւերագիրները, այլեւ զրեց, որ թող նզովուին բոլոր անոնք, որոնք կը խախտեն հայոց հաստատուած իրաւունքները: Նշենք, որ այս վաւերագիրները պահուած են Երուսաղէմի Ս. Ծակոբեանց վանքին մէջ:



Երուսաղէմ

բէկ Նուրէտտինին, ձախողեցաւ: Պոտուէն Գ. 1158ին ամուսնացաւ Բիւզանդիոնի կայսր Մանուէլ Ա. կոմսենոսի եղբոր աղջկան՝ Թէոտորա կոմսենոսի հետ: Քաղաքական այս ամուսնութեան շնորհիւ բարեկամութիւն հաստատուեցաւ երկու արքունիքներուն միջեւ. բան մը, որ նպաստաւոր եղաւ նաեւ հայութեան համար:

Արդարեւ, Մանուէլ կայսր 1159ին անձնապէս մեծ բանակի մը զլուխը անցած մտաւ կրիպտոյ. Թորոս Բ. իշխան քաշուեցաւ լեռները՝ խուսափելու համար թշնամիին դէմ անհաւասար ուժերով բաց ճակատամարտ մղելէ: Նոյն

ՅՈՒՆԱՔ Տ'ԱՆժՈՒՍ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ՄԵԼԻԶԱՆ՝ ԹԱԳՈՒՆԻ

Պոտուէն Բ. թագաւոր իր մահէն (1131) երկու տարի առաջ արդէն դուստրը՝ Մելիզան (Melisand) եւ անոր ամուսինը՝ Յուլը տ'Անժու իրեն ժառանգորդ հռչակած էր: Նշենք, որ Պոտուէն Բ. իր հայ կնոջմէն՝ Մորֆիայէն չորս դուստր ունէր. Իվէթ (որ Բեթանիոյ Ս. Լազար վանքին կրօնաւորուէր դարձաւ), Մելիզան, Ալիս (որ Անտիոքի Պոսեմանտ Բ. դուքսին եւ յետոյ ալ Հոռկ տը Ռամենիի հետ ամուսնացաւ) եւ Հոսիերնը (որ Թրիփոլիի կոմս Ռեմոն Բ.ի հետ ամուսնացաւ):

Մելիզանի (ծնած՝ 1092ին) ամուսինը՝ Յուլը տ'Անժու (նոյնպէս ծնած՝ 1092ին) Ֆրանկ ազգեցիկ իշխաններէն էր. զաւակը՝ Սուրիի տէր Յուլը Գ.ի եւ Մոնֆորթի տէր Պերթրաուայի, ան 1109ին ամուսնացած էր Մէնի տէր Արենպուրկայի հետ: Յուլը տ'Անժու առաջին անգամ 1120ին Պաղեստին այցելեց եւ 1129ին ամուսնացաւ Մելիզանի հետ: Պոտուէն Բ.ի մահէն ետք, 1131ին, ան Երուսաղէմի թագաւոր հռչակուեցաւ եւ նոյն տարին իսկ վէճի բռնուեցաւ Անտիոքի հետ: Այնուհետեւ կնոջ սիրականը՝ Հոռկ տը Փուրսէ պատգամեցաւ դէմը:

Յուլը տ'Անժու զարկ տուաւ ամրոցներու կառուցման՝ իր թագաւորութիւնը պաշտպանելու համար թշնամիներու յարձակումներէն. անոր կառուցած ամրոցներուն գլխաւորն էր Քրաք տը Մոպա:

«ՂԱՐԱԲԱՂԸ ԵՐԲԵՔ...»

Շարունակում՝ 4րդ էջին

Քին՝ Անգլիոյ, Սլովենիոյ եւ Թուրքիոյ մէջ: Մանա-
ւանդ Միացեալ Նահանգներ մեծ ճնշում կը բանեցը-
նեն Թուրքիոյ վրայ, որպէսզի Անգարա բանայ սահ-
մանները Հայաստանի հետ:

Հ.- Այս շրջագիծի՝ մէջ կը դիտէք այսպէս կոչ-
ւած «Հայ-Թրքական Հաշտութեան Յանձնա-
խումբ»-ին կազմութիւնը:

Պ.- Բացարձակապէս: Այդ յանձնախումբը Հայաս-
տանի մէջ ազդեցութիւն եւ հեղինակութիւն չունի:
Ընդհակառակն, անիկա խիստ քննադատութեան են-
թարկուեցաւ:

Հոս պէտք է նշեմ, որ ամերիկեան կողմը դիմեց ին-
ծի, որպէսզի մաս կազմեմ այդ յանձնախումբին: Պա-
տասխանս եղաւ հետեւեալով. Հայ-Թրքական յարաբե-
րութիւններուն կողմնակից եմ, սակայն երբ Հայկա-
կան Յեղափոխութեան հարցը սեղանի վրայ դրուի
կը քաշուիմ անկէ: Պատճառաբանութիւնս հետեւ-
եալն է. երբ նման յանձնախումբի մէջ կ'արձարծուի
Հայկական Յեղափոխութեան հարցը, ասիկա կը նշա-
նակէ, որ անիկա վիճելի է: Ասիկա անընդունելի է,
որ 1915ին պատահածը Յեղափոխութիւնն է:

Հ.- Համաշխարհային ցուցումը վտանգ կը համա-
րէ ք:

Պ.- Ո՛չ: Միայն թէ Համաշխարհային ցուցումն ընթաց-
քին մէջ եթէ մեր տեղը չզտենք, ապա ասոր մէջ կը
կայանայ վտանգը: Ոչ որ դէմ կ'ընայ դնել Համաշխար-
հային ցուցումն եւ ես կը կարծեմ, որ ատիկա նպաստա-
ւոր է հայութեան համար: Կրնամ տալ երկու օրինակ:
Առաջինը՝ Գրիգոր Նարեկացիին «Մարեկն» է: Այս
գործը Համաշխարհային ցուցումն պատճառով դուրս
եկաւ Հայկական նեղ շրջագիծէն եւ այսօր անիկա սե-
փականութիւնն է աշխարհին:

Երկրորդ օրինակը Ջիւան Գասպարեանի հրաշալի
տուտուկն է: Ատիկա այլեւս գեղջկական պարզ գոր-
ծիք մը չէ: Միջազգային ժապաւէններու մէջ ամէնէն
տրամաբիր վայրկեաններուն կը հնչէ Հայկական տու-
տուկը: Ասիկա հրաշալի իրագործում է:

ՇՈՒՇԻՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Շարունակում՝ 5րդ էջին

Իսկ Շուշիի դիրքին Ստեփանակերտէն եւ Շուշ գիւ-
ղէն, քաղաքին պաշտպանողական ամրութիւնները
ճեղքած Հայ ազատամարտիկները բուռն կուրծքով
կը մղեն Շուշիի կեդրոնական շուկային եւ յատկապէս
արեւմտեան թաղամասերուն մէջ: Կը բռնկին նաեւ
Նորաշէն - Ազդու - Միւրիշէն առանցքը եւ Ասկե-
րանի սահմանները: Ինքնապաշտպանութեան ըն-
թացքին Հայ ազատամարտիկներու շարքերէն կ'իջ-
նան 8 զոհ եւ տասնեակ մը վիրաւորներ:

Այսպէսով, Շուշիի ազատագրութիւնը կ'ամբող-
ջանայ 8 Մայիս 1992ին, կէսօրուան մօտերը, երբ
Թշնամի ուժերու վերջին մնացորդները պարտուած՝
կը հեռանան քաղաքէն: Շուշիի ազատագրութեան
ետք, Հայ ազատամարտիկները յաջողորմ շարժումն
ընթացքին կ'ազատագրեն նաեւ Լաչինը՝ բանալով Ար-
ցախը Հայաստանէն բաժնող միջանցքը:

ՇՈՒՇԻՆ ԱԻԵԼԻ Է...

Շարունակում՝ 5րդ էջին

մտաւ ո՛չ վրէժը: Եկաւ
հատուցումը: Վառու՞մ
էին կրակակէտերը:

Հեռագիտակը այլեւս
չէր բաւարարում ինձ:
Յանձնարար մ'օտնու՞մ
էի շրջագիտակին ու
մանրամասնօրէն դի-
տում, թէ ինչպիսի փու-
րով եմ հեռանում խա-
ղաղ բնակիչները: Հա-
րաւից միայն մի ճանա-
պարհ էր դուրս գալիս,
անցնում ժառարիքի տա-
րակով, որի վրայ վեր էր
պահում հեռուտառաջ-
տարակը: Եւ այդ ճանա-
պարհը լուսաբացին ար-
դէն խցանուած էր մեքե-
նակներով ու հետնոտ-
նով: Ինքնապաշտպա-
նութեան մարտիկները
ամէն ընկեր կարող էին
փակել ճանապարհը, որ
տանում էր Լաչին, եւ
այդ ժամանակ տասնեակ
հազար ազերիներ կը
խեղդուէին արեան մէջ:
Սակայն մենք գիտակ-
ցաբար չզիմեցինք այդ
քայլին: Այդպէս եղաւ
նաեւ Խոջալուում: Նոյն-
նիսկ Ազրպէյճանի նա-
խագահ Մուրադախովը
ստիպուած եղաւ հրա-
պարակայնօրէն խոստո-
վանել, որ հայերը մի-
ջանցք բացեցին փախը-
ստականներին համար:

Ճիշդ է՝ յետոյ ազերիա-
կան քարոզչութիւնը
իրեն խայտառակութիւ-
նից փրկելու համար դի-
մեց չլուծած կեղծիքի,
լուրեր տարածելով, թէ
Ռոջալուում միջնէ վեց
հազար զոհեր են եղել
(տարեց տարի այդ թիւը
զնայով աճում է): Ի
դեպ, ես ժողովրդական
պատգամաւոր էի ընտը-
ւել Ասկերանի շրջանի
կողմից, որի մէջ
մտնում էր նաեւ Խոջա-
լու աւանը, որտեղ պաշ-
տօնական տուեալներով
այրում էր 1700 ազերի:
Սակայն սա արդէն ու-

մակայն հրասայլը երե-
տուն մեքքից դիմահար
կրակեց: Ես այդ տես-
նում էի շրջագիտակով
Վիթխարի բազմաթոնա-
նից աշտարակի իր փո-
ղով հանդերձ նետուեց
նամբեզրը: Երկու հրա-
սայլաւոր դեռ էի մեր
մարմինները նետուեցին
հակառակ կողմի լեռան
ժայռոտ լանջի վրայ:
Գլխատուած հրասայլի
տեսքից, որ մտն էր հրա-
ժայթք վիշապի, կարմիր
բոցի սիւն դուրս բուռ:
Աչտոն ու Շահէն գոնուե-
ցին, Գագիկին յաջող-
ւեց փրկել:

Մինչեւ ուշ երեկոյ
դաժան մարտեր էին
գնում յանուն Շուշիի
ազատագրման: Իրիկնա-
դէմին երկու ուղղաթիւ
անսպասելիօրէն յայտ-
նուեցին ու ուղղակի հրա-
մանատարական կէտի
գլխին, հրթրակոծեցին
մեր դիրքերը ուղղակի
քաղաքի «գարպազաբո-
րի» մօտ: Իսկ տասը րո-
պէ անց երկու «Աս- 24»
հինգ հարիւր քիլոկրամ-
նոց ռումբեր նետուով
Ստեփանակերտի, Քա-
րինտակի, Միւրիշէնի
վրայ՝ բուռն Ադդամի
կողմը:

Դժուար չէ ենթադ-
րել, թէ ինչու Շուշիի
անկման առաջին իսկ
օրերից սկսած ազերիա-
կան պաշտօնական քա-
րոզչութիւնը յամառօ-
րէն ու անընդհատ զար-
գացնում էր իրենց հրա-
մանատարութեան դաւա-
նանութեան մասին գա-
ղափարը: Այդպէս հեշտ
էր բացատրել եւ արդա-
բացել սեփական պար-
տութիւնը եւ միաժամա-
նակ համահարթել յաղ-
թանակի եւ գէնքը ձեռ-
քին հայրենի հողը պաշտ-
պանող հայ զինուորի
սխրանքի արժեքը:

ՄԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item description and price. Includes items like 'Պէլյուրի սակարանի մէջ օտար դրամա- հիշներու փակման սակագները հետեւեալներն էին երկ.' with prices ranging from 31,50 to 1354,16.

Table with 2 columns: Item description and price. Includes 'ՈՍԿԻ' and 'ՍՆԱՅՈՒՄ' items with prices ranging from 105,000 to 4,59.

Table with 2 columns: Item description and price. Includes 'ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ' with prices ranging from 4 4/8 to 4 5/8.

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item description and price. Includes 'Լոնտոնի սակարանի մէջ, դրամահիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երկ կէսօրին.' with prices ranging from 0,8802 to 1,4357.

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Օրը յարմար չէ քմայքներ ունենալու, կեղծ ձե-
ւերու դիմելու: Եղէք բացսիրտ ու պիտի տեսնէք, թէ
ամէն հարց կարգադրուած է ինքնաբերաբար:

☆ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Ձեր տրամադրութիւնը պիտի պղտորի, աշխատելու
եռանդ պիտի չունենաք, որովհետեւ նախորդ գիշեր ան-
քուն մնացած էք: Այս իրիկուն հարկ է լաւ բնանաք, ու
ամէն հակասութիւն կամ տրտմութիւն պիտի փարատի:

☆ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Իրիկունը ունիք հետաքրքրական հանդիպում մը
ծանօթ թէ անծանօթ անձերու հետ: Ձեզմէ պիտի
խնդրեն արտայայտել ձեր շնորհները: Մի՛ մերժեք:

☆ՆԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Ընտանեկան յարկի տակ անհանոյ հարց մը պի-
տի խնդարէ ձեր օրը: Բարեբախտաբար իրիկունը
մընդլուրտը պիտի բարեխալուի եւ պիտի մոռնաք ցե-
րեկուան անհամ հարցերը:

☆ԱՌԻԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Փոքր պատահարներ կրնան ձեզի դէմ հանել ձեր
շուրջիներուն: Բարեբախտաբար այս վիճակը պի-
տի ըլլայ կարեւոր, եւ օրուան մնացեալ ժամերը
պիտի անցնին հանդարտ:

☆ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Երբ շուկայ երթաք, անիմաստ գնումներ մի՛ կատա-
րէք, այլ գնեցէք պիտանի ապրանքներ: Թերեւս աւելի
լաւ կ'ընէք, եթէ յետագոյն այսօրուան գնումները:

☆ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Ոմանք պիտի քննադատեն ձեր գործերը, շղայ-
նացնելով ձեզ: Բայց ասիկա պատճառ մը պէտք չէ
ըլլայ, որ ձեր աշխատանքները թուլցնէք: Կարեւո-
րութիւն մի՛ տաք շատասխաններուն:

☆ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Առաւօտեան սկսեալ անտրամադիր վիճակ մը պի-
տի ունենաք: Ձեր բնական վիճակը պիտի վերագրու-
նէք օրուան վախճանին: Տեղի մի՛ տաք ոմանց հրա-
հանգներուն, այլ՝ աշխատեցէք ըստ ձեր փափաքին,
ձեզի հանոյ թուացած աշխատանքները:

☆ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Լուսնետութիւնը աւելի պիտի պայծառացնէ ձեր
տրամադրութիւնը փայլ մը տալով ինքնուրեքանց:
Օրը լեցուն է հանելի հանդիպումներով:

☆ԱՅՄԵՂՁԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Ցերեկը պիտի ըլլայ թիչ մը շտոք եւ աղմկոտ,
բայց իրիկունը մընդլուրտը պիտի պայծառանայ,
մասնաւորաբար՝ ձեր ասպարէզին առջնութեամբ:

☆ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Ձեզի եղած առաջարկ մը պիտի շտոքեցնէ ձեզ,
երկընարանքի առջեւ պիտի գտնուիք, բայց ի վեր-
ջոյ պիտի արտայայտէք ձեր մերժումը: Նման հար-
ցեր պահ մը պիտի խնդարեն օրը, բայց շուտով
պիտի վերագտնէք ձեր անդորրը:

☆ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Ձեզի եղած առաջարկը, դրամական ներդրումի
մասին, շուտով մի՛ ընդունիք, որովհետեւ մարդիկ
յանայ չեն յարգեր իրենց խոստումը եւ կրնան ձեզ
յուսախաբ ընել: Զգո՛ւ չէ:

ՕՐԱՏԵՏՐ



Table with 2 columns: Time and Program Name. Includes programs like '10:00 - Սապահո հասն', '13:00 - Լուրեր', '14:00 - Եւրոնիւզ', '15:00 - Մրնէսում լաւտում', etc.

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5140

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

Table with 10 columns and 10 rows, likely a calendar or schedule grid.

Table with 2 columns: Program Name and Description. Includes '1. Քամուած ձիթապը- տուղի մնացորդ - Ման- գաղի կոթ:', '2. Ուրուական - Ամ:', etc.

ԹԻՒ 5139

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄԸ

Table with 10 columns and 10 rows, likely a calendar or schedule grid.



